

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կօպէկ:

„ՄՇԱԿ“ ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ 1878 թ-ից

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒԹ Է ԼԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերէն:

Լրագրի գինը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵԿԱՆ ՀՆՈՒՆԳԻՐՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ:

ԼՈՒՆԱԶԻՆ ՀԼՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կօպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է գիմել հետեւեալ հասցէով՝ ТИФ-ЛИСЪ Редакция «Мшакъ».

Խմբագիր—Տրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը — Ներքին տեսչութիւնը, Նախկին Խարկովից, Նախկին Կանադայից, Նախկին Երևանից, Նախկին Խմբագրին: Ներքին լուրերը — Արտաքին տեսչութիւնը, Լորդ Գերբի ատենաբանութիւնը, Անգլիա: Արտաքին լուրերը — Խառն լուրերը — «Մշակի» հեռագրները — Յայտարարութիւնները — Տեղեկացոյց:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Լնցեալ շաբթվայ հեռագիրները հաղորդեցին, որ աւստրիական զօրքերից Բօսնիայի և Հերցեգովինայի գրաւելը արդէն արգելքների են պատահում: Լատրիական զօրքերի առաջնաւորն ոչ թէ միայն տեղական բնակիչներն են ընդգրկմանում, այլ մինչև անգամ թիւրքաց կանոնաւոր զօրքերը, որոնցից երեք բաւարիօն միացել են ժողովրդի հետ և ընդգրկմանում են աւստրիացիների զօրքերին:

Բերլինի դաշնագրի յօդուածներից մէկի համեմատ, պէտք է ուստաց զօրքերը թողնեն թիւրքաց երկիրը և վերադառնան իրանց սահմանները. եւրոպական թիւրքիայում պէտք է մնան միայն 50,000 ռուս զինուորներ, որպէս զի նրանք հսկեն թէ Բօլգարիայի անկախութեան պահպանվելու, թէ արեւելեան Բուլղարիայում ըէֆօրմներ մտնելու վրա: Իսկապէս ուստաց զօրքերը մտադրութիւն չեն ցոյց տալիս Կ. Պօլսի տակից հեռանալու, այլ ընդհակառակը նորա ամրացնում են իրանց դիրքերը,

իսկ անգլիական նաւատորմը նոյնպէս մնում է իր տեղը հակառակ Բերլինի դաշնագրի յօդուածներից մէկի:

Ռուսաց մամուլը առանձին հաւատ չէ ընծայում խաղաղութեան երկարատեւութեանը: Լրագիրներէից շատերը կասկածանքով են նայում այն 50,000 ռուս զօրքի գրութեան վրա, որոնք մնացած զօրքերի եւրոպական թիւրքիայից հեռանալուց յետոյ, պէտք է մնան Բօլգարիայում: Օրինակ «ГОЛОСЪ» լրագիրը կարծում է, որ Ռուսաստանի հարաւային նահանգներում, թիւրքաց սահմանի մօտ պէտք է պահել զոնեա չորս հարիւր հազար պատրաստի զօրք (չը նայելով որ երկրին դա բաւական թանգ կը նստի), որպէս զի գրանք հարկաւոր դէպքում կարողանան պաշտպանել թիւրքիայում մնացող զօրքերին, որոնց մի կողմից թիւրքաց զօրքերը և միւս կողմից աւստրիական զօրքերն են սպառնում:

Լնգլիական կառավարութիւնը կծուրեսից յաղթանակով դուրս եկաւ: Կա պահեց թիւրքիայի համար բաւական երկիր, նա ձեռք բերեց Լնգլիայի համար Կիպրոս կղզին, նա սատակացրեց Լնգլիայի ազդեցութիւնը թիւրքիայի վրա, զաղանի դաշնադրութեան համեմատ նրա հոգաբարձու դառնալով: Եւրոպիսի աջողութիւններ շատ դժուար է ձեռք բերել, իսկ ձեռք բերող կառավարութիւնը

իր երկրում մեծ հեղինակութիւն է ստանում:

Լնգլիական կառավարութեան հետ մի և նոյն չը պատահեց: Նրա քաղաքականութեան ընդդէմ է ամբողջ ազատամիտ կուսակցութիւնը, որ պախարակեց կառավարութեան քաղաքականութիւնը Գլադստօնի և Հարտիստօնի բերանով:

Գերմանական Բայլստագի համար ընտրութիւնները արդէն կայացան: Չը նայելով բոլոր արգելքներին որ դնում էին թէ կառավարութիւնը, թէ կղերականները և թէ սօցիալ-դէմօկրատները, ազատամիտ կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ: Բայլստագի ներկայ անդամների մեծամասնութիւնը ազատամիտ կուսակցութեանն է պատկանում:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

10 յուլիսի

Ամսի 9-ին անցաւ Խարկովի արեւելի հրամանատուն Նորին մեծութիւնը, Նախ-Էդիին պարսից շահը, Բոլոր տեղիս զանազան բարձր ատենաների և հիմնարկութեանց ներկայացուցիչները խումբ բազմութեան հետ ժողոված էին երեկոյեան ժամի 9-ին երկաթուղու կայարանում բարձր հիւրին հանդիպելու: Հոգաբարձու տափաքակի վրա կանգնած էր պատուաւոր զօրքը: Իսկ երկաթուղու կայարանը զարդարված էր տեղալին դրօշակներով և լուսաւորված էր գոյն գոյն լապտերներով և զարդեր: Քաղաքական և զինուորական աստիճանաւորների փաղուշն նշանադրեալ, անադին ճարգալոյցը և պատուաւոր զօրքի կանոնաւոր կարգը որի զբաղում կանգնած էին երաժիշտները՝ ներկայացնում էին մի հետաքրքիր և կենդանացող տեսարան: Անցաւ մօտաւորապէս մի ժամ մինչև ճանապարհի վրա հեռուից երեկեաւ երկաթուղու գնացքը: Նրբ գնացքը մօտեցաւ, հաւատարմեցաւ կայարանի շինութեան հետ՝ թնդաց զինուորական հանդիսաւոր մարչը—գնացքը կանգնեցաւ: Նորին մեծութիւնը ուրախ դէմքով դուրս եկաւ վագօնից, բարեկեց հանդիպող աստիճանաւորներին ու բազմութեան և անցաւ պատուաւոր զօրքի առջև, որ անդադար ժողովրդի հետ միասին «ура!» էր բացականչում: Պատուաւոր զօրքը տեսնելուց յետոյ նորին մեծութիւնը մտաւ կայարանում գտնված կայսերական սենեակները՝ որտեղ փոքր ինչ մնալուց յետոյ յայտնեց Խարկով քաղաքը տեսնելու ցանկութիւնը: Չանցաւ և մի քանի րօպէ՝ իսկոյն նորին մեծութիւնը և նրա սկիւղայի համար պատրաստ էին արդէն բաց կառքեր՝ որոնց մէջ բազմելով անցան տեղիս երկաթուղու փողոցով և մտադրել էին գնալ քաղաքիս զբոսարան—այգիներից մէկը: Ընտրած էր արդէն «Новая Бавария» այգին, բայց կէս ճանապարհի վրա սկսեց այնպիսի մի աստիճան անձինք որ նորին մեծութիւնը փոխեց իր մտադրութիւնը և վերադարձաւ երկաթուղու

կայարանը որտեղ փոքր ինչ ժամանակ մնալուց յետոյ՝ մտաւ իր սկիւղայով գնացքի վագօնը: Նորին մեծութիւնը, վագօնի պատուհանից ուրախ և զոհ արտով կայարանի գեղեցիկ ճրագալոյցով և փառաւոր հանդիսականներով փոքր ինչ զմայլվելուց յետոյ, ճանապարհ ընկաւ դէպի Բոստօվ՝ նոյնպիսի հանդիսաւոր զինուորական մարշով և «ура»-ներով ինչպէս և հանդիպելու ժամանակ:

Աթ. Մեղրուհեանց

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

24 յուլիսի

Կանադայի ազգեակները տեսնելով որ այգիների խաղողը մասամբ աղաւթված է թողը՝ և ուն խառնաւանդած հիւանդութիւնից, իրանց քաղաւոր էին համարում, բայց ցաւելով պէտք է ասած, որ այդ ուրախութիւնը երկար չը տևեց: Ամսի 4-ին կէսօրվայ ժամը մէկին երկու անգամ 15 րօպէսպիսի եկած աստիճան կարկուտը ոչնչացրեց նրանց յոյսը ոչ թէ միայն այս տարվայ պտուղի մասին այլ և առաջիկայ տարվայ, ըստ որում կարկուտը փչացնելով խաղողի ողկոյը մնացել է և որթան մատը: Դերերը վկայում են որ առաջի անգամն է որ նրանք այսպիսի մեծութեամբ՝ կարկուտ են տեսնում: Կանադայի վնասը շատ մեծ է, ասում են հարկը հազարից աւելի է: Սրա մասին պարոն քաղաքագուծը յայտարարութեամբ գիմել է քաղաքական պօլիցիային որ մնասները ակնհեր զուրս բերի: Վերջինս սկսել է և դեռ չէ վերջացրել մնացի որքանութեան որոշելը: Նախ քան կարկուտը, կայծակը խփելով քաղաքից դուրս այգիներում անագին ընկուղներն միջից կտորեց:

Ամսի 15-ին տեղիս հողոր կառավարութեան մէջ աճուրդ էր նշանակված եկեղեցապատկան Արափուի վարելահողերը երեք տարի ժամանակով կապալով տալու համար: Ինչպէս հաստատադրելից լսեցինք՝ աճուրդը մնացել է նախկին կապալաւու Շ. Բաշուղեանից վրա տարին 420 ռուբլով (անցեալ երեք տարին ունէր վեր առած 200 ռուբլով): Շատերը յոյս ունեն որ մեր եկեղեցու նորոշուի երեցփոխանը քաջ ծանօթ լինելով ուսումնարանների ոգորմելի դրութեանը, այդ գումարը կը հասցնէ դպրոցների հոգաբարձութեանը:

Շ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

25 յուլիսի

Ինչպէս յայտնի է Երևան քաղաքի ժողովրդի մեծ մասը կազմում է պարսիկ ազգաբնակչութիւնը և սրանց ձեռքին է համարեա քաղաքաւայէն ողջ մտադրութիւնը, հաջորդաւորութիւնը, բացի բոլոր կոչված հայից, և միջավաճաւորութիւնը (բաղկալ) ու այդ պատճառով էլ դրանք ունեն միջոց հայերին նեղացնելու: Նրբ լինում էին հայի համար նշանաւոր, ինչպէս կիրակի, տօն և այլ հանդիսաւոր օրեր, այդ միջոցին կամ Երևանում ամենեկին չէր գտնվում միս, հաց ու մրգեղէն, կամ եթէ գտնվում էր այն էլ հոտած, հնացած, կեղտոտ, փտած, վերջապէս բոլոր հակառողմութեան յատկութիւններով՝ ի՞նչ և չը նայելով դրան՝ այդ ամենը անճարացած զընում էին խեղճ հայերը, լաւը չը լինելու պատճառով: Բայց այժմ պ. Յ. Ղօրջանեանց քաղաքագուծի կարգադրութիւնը վերջ դրեց այդ անկարգութեանը:

Այս քանի օրերս յիշեալ քաղաքի պ. քաղաքագուծը հրաւիրեց բոլոր հայ հարուստներին և առաջարկեց կազմել մի հայ ընկերութիւն, որ իր ծախսով բաց անէր մտադրութեան, հա-

*) Ասում են մէկ մարդ կռուել է և մէկ հատը եկել է տասն և հինգ մսխալ:

ցավաճառութեան ու մրգավաճառութեան խա-
նութեան. զբաղմով և սահմանափակել պար-
սիկների կամայականութիւնը: Եւ այն ահագին
օգուտը, որ ստանում էին նրանք, այժմ կանգնի
ընկերութեան ձեռքը ու այդ օգուտից էլ մի
նշանաւոր մասը յատկացնով աղքատիկ հա-
մարդներին: Հրաւիրված պարոնները ամենայն
սիրով և ուրախութեամբ յանձնառու եղան այդ
շահաւէտ և ազգօգուտ առաջարկութեանը: Կազ-
մվեց ընկերութիւնը, որի զբաժ գումարը, ինչ-
պէս պատմում են, հասնում է քառասուն հա-
զարի: Ընտրվեցին գործակառարներ և վարդա-
պետ կիրակի օրը առաջին անգամ բացվեցան
առ այժմ մտադրութեան չորս խանութներ:
Արժանի և հետաքրքիր էր տեսնել թէ ինչ-
պէս հայերը ոգևորված էին գնում թարմ ու գե-
ղեցիկ միս: Այն ընտանիքը, որ 2 կամ 3 զրկան-
քով էր բաւականանում ուրախութեանից 7—8 էր
գնում այն օրը: Մանաւանդ հետաքրքիր էր տե-
նել, որ երբ մի հայ անդրադարձաւ դիմում էր
պարսկին, միտ հայը նրան այնպիսի ընդդիմա-
դրական ճառեր էր կարդում, այնպիսի փաստեր
էր բերում, որ խեղճը իսկոյն թողնում էր պարս-
կին ու «Աստուած, երկինքը, գետինը վկայ, ես
չեմ իմացել, տօ բան ես հայ չեմ. հայ քրիստո-
նան միս ծախի, ես կերթամ թուրքից կառնեմ
ասեղով կրկին դիմում էր հայերին:

Բացի այս, սրա նման և շատ ուրիշ կարգա-
դրութիւններ են եղել նոյն քաղաքագլխի կող-
մից, որոնք արդարեւ մեծ բարիք են քաղաքա-
ցիների համար: Արգելված է ոտաւոր առևտուրը:
Մի տեսակ մարդիկ գիշերով շտապում էին հրա-
պարակ և որքան բեռնեցով բան կար իրանք
առնում էին (սրանք են որ կոչվում են ոտաւոր
առևտուր անողներ) և յետոյ մէկին տաս գնով
վաճառում էին խանութատերերին, իսկ այս վեր-
ջինները քաղաքացի գնողներին ի հարկէ նոյն-
պէս մէկին տաով. ուրեմն սրանից շատ լաւ կա-
րելի է մակարերի, թէ որքան թանկ կը նստէր
խեղճ գնողների համար: Բայց այժմ երբ վերջա-
ցաւ այդ ոտաւոր առևտուրը քաղաքում ամեն
բան էժան է, մանաւանդ մրգեղէն՝ ծիրանի,
խնձորի, սալորի, երևանի լիւրը (12 զրկանքան)
7-ից—40 կօպէկ արժէ, վարունգի 100-ը 20 կամ
15 կօպէկ, սեխի բեռը 50—60 կօպէկ, խաղողի
լիւրը, որ նոր է դուրս եկել, 50—60 կօպէկ և
այլն, որ զարմանալի է այսպիսի տարում:

Այս ամենի համար երևանից պարտական են
իրանց քաղաքագլխին, որ արդարեւ արժանի է
չնորհակալութեան:

Երևանից

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 28 յուլիսի

Կարդացի ձեռն «Մշակ» լրագրի № 126-ի մէջ
մի լուր Վերանաւորից հաղորդած, որի մէջ ինձ
վրա բողբովին ի զուր մի քանի մեղադրանքներ
էին գրած: Որքանակ այնտեղ տալով էր, որ իբր
թէ ես ուխտաւորներին չէի տալիս օրհնած աղ
մատաղ: Համար մինչև նորա ինձ չէին խոտա-
նում մատաղի կէսը տալ և այլն: Հարկաւոր եմ
համարում յայտնել ձեռ լրագրի միջոցով հայ
կարդացող հասարակութեանը, որ այդ լուրը
միայն զպարտաւոր է և ուրիշ ոչինչ: Կարծեմ որ
այսքանը բաւական է ճշմարտութիւնը վերա-
կանգնելու համար, իսկ եթէ պարոնը ազնուութիւն
ունի՝ կամ ինքը հրաժարվի իր ասածներից և
հերքէ ձեռ լրագրի միջոցով կամ հրապարակ
դուրս գալ և հաստատէ բոլոր այդ անտեղի մե-
ղադրանքները: Եթէ նրան այդ կաջողվի, ես
պատրաստ եմ կրել իմ պատիժը:

Յովհաննէս քահանայ Շիշմանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք Կովկասեան
Գեղարանատեսական ընկերութեան ուսումնական
ժողովածուի առաջին շրջանը «Сборникъ Кавк.
Общ. Сельск. Хозяйства.» Вып. 1. 1878 г.
Այդ գրքի մէջ կան երեք յօդուածներ՝ Սօկո-
լովի յօդուածը ձկնորսութեան և ձկնարուծու-
թեան մասին, Գ. Է. Կոկոս. յօդուածը այգե-
գործութեան վրա վաղիկապատմութեամբ, և Ս. Բա-
րու. վէի յօդուածը գինեգործութեան վրա:

ԶԱՔԱԹԱԼԻՑ ստացանք 10 բուրջ այնտեղի
գրադարանի համար ստացվող «Մշակ» ներկայ

տարվայ բաժանորդագիրը: Այդ գումարը հաւա-
քել էին Զաքարիայի բարձր դասի կանայք 10-
սուտ տարած փողերից:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ մեզ հաղորդում են, որ Կօնդ քա-
ղաքամասում մի երիտասարդ տարձանակը լըց-
նելու ժամանակ իր երեսը և ձեռքերը այրում
է վառօդով: Այսպիսի դէպքեր երիտասարդների
անզգուշութեանից շատ են պատահում:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ մեզ հաղորդում են, որ քաղաքա-
գլխի պ. Յ. Ղօրղանեանը առաջարկել է Զան-
գու գետից քաղաքի համար ջուր հանել: Երե-
ւանը այդ ջրի մէջ մեծ կարօտութիւն ունի:
Հասարակական այգին բաւական մաքուր և գի-
շերները լուսաւորված են պահում: Քաղաքի հին
ջրանցքները, որոնք հեղեղից վնասված էին,
այժմ մաքրվում և նորոգվում են:

Մենք հարկաւոր ենք համարում դարձաւ յայ-
տնել, որ խմբագրատանը ստացված յօդուած-
ները և նամակները, որոնք մաքուր չեն լինի
գրված, առանց կարդալու կը գցենք գամբիւղը:
Խաբքանչիւր գրվածքի մէջ պէտք է լուսանց-
քներ թողնել որ կարողանանք ուղղել: Ինչքան
էլ յօդուածը մեծ և անհամ լինի, եթէ նա մա-
քուր է գրված, խմբագրատանը ամբողջապէս կը
կարդացվի:

ՇԱՄԱԼԻՑ մեզ գրում են. «Տեղոյս առաջ-
նորդ թագէտու եպիսկոպոսը այս օրերս Բագու-
գնալով, ինչպէս ասում են, նրան աջողվել է այդ
քաղաքում հաւաքել 1500 բուրջ Ս. Աստուա-
ծածնի եկեղեցին նորոգելու համար: Սրապատ-
մադրել է այդ գումարի մի մասը տալ այնտեղի
ուսումնարաններին:»

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր դպրոցի
հոգաբարձութիւնը, ընդունելով պ. Յովսէփ Իզ-
միրեանցից նուէր հետեւող գրքեր՝ «Հիստորի-
անից նախնի պատմագրաց հայոց, գրքը առա-
ջին գրառու, գրքը երկրորդ և երրորդ աշխար-
հաբառ» աշխատասիրութիւն Կ. Կոստանեանց,
տպագրած վրէժնայում 1877 թ. թիւն, յայտնում
է նուիրատուին իր խորին շնորհակալութիւնը:

ՇԱՄԱԼԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 11-ին հայ
երիտասարդների խումբը յօգուտ կրէյսերների
նաւատորմի և օրիորդաց դպրոցի մի ներկայա-
ցումն տուին Ներկայացրին «Անփողութիւն» և
«Ժառ» կոմիտէի անդամները: Պ. պ. Յ. Նաւրուզեանցը
և Մարդուկեանցը իրանց աջողակ խաղով կեն-
դանութիւն տուին ներկայացմանը: Ներկայ եղող
հասարակութիւնը շատ զոհ մնաց: Ներկայացու-
մից զոյացաւ 50 բուրջ, որից 25 բուրջ յանձնվեց
քաղաքապետին յօգուտ կրէյսերների, իսկ օրիոր-
դաց դպրոցի մնացած 25 բ., լուծւում են, որ պ.
պ. երիտասարդները մտադիր են առ խաղա-
ցողներից մէկին, որ յայտնած է թէ ներկայաց-
ման ժամանակ 35 բ. փող է կորցրել:»

ԿՕԶՕՐԻՑ մեզ հաղորդում են, որ յուլիսի
23-ին վարդապետի տօնին այնտեղի եկեղեցում
հայր Նիկիկ Նիգիկեանցը մի գեղեցիկ քարոզ է
կարդացել, որով արժանի է մի քանի կարևոր
հարցեր: Հայր Նիկիկը բացատրել է, թէ որքան
անհրաժեշտ է հայ մանուկներին իմանալ իրանց
մայրենի լեզուն, որ Կօջօր գնացող հարուստ հա-
յերից մեծ մասի օրդիքը չը գիտեն հայերէն խօ-
սել: Պատուելի քահանայն առաջարկել է ամա-
ռանոցում ապրողներին՝ մի ուսումնարան հիմնել
Կօջօրում ամառվայ երկու ամիսների համար, յոր-
տեղ հայ երեխաները սովորէին իրանց մայրենի
լեզուն: Մենք յայտնում ենք մեր համարկութիւնը
տէր-հօր առաջարկութեանը և կը ցանկանայինք,
որ այդ գործը աջողվէր:

ՇԱՄԱԼԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքից
մի քանի վերստ հեռավորութեամբ, Սաղիան
անունոված գիւղում մի հայ կին ծնել է զար-
մանալի մանուկ: Նա ունեցել է միմիայն կրած
երկու գլուխ, որոնք հաստատված են եղել մի
պարանոցի վրա և վերջաւորված մի ծնոտով, ու-
նեցել է չորս աչք, երկու քիթ, երկու բերան,
չորս ձեռք և չորս ոտք: Զեռքերը և ոտքերը
բնական կառարկութեամբ վերջացած են եղել
հինգ մատերով: Անկարելի է եղել որոշել երե-
խայի սեռը: Մանկաբարձ կինը առանց մօրը
յայտնելու, մեռած հրէշին թաղել է հողի մէջ:»

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ հաղորդում են, որ
այնտեղի օրիորդաց ուսումնարանի հոգաբար-

ձուներից մէկը, վերջին թատրոնական ներկա-
յացման ժամանակ, երիտասարդներից վարձ է
պահանջել զանիճի համար: Եթէ այս լուրը
ճիշդ է պ. հոգաբարձուն շատ անկանոն է վար-
վել, մանաւանդ որ, ինչպէս մեզ յայտնի է,
Ագուլիսում տուած ներկայացումներից գրեթէ
բոլորի եկամուտները տրվում են երկուսն զու-
րոյններին:

Մի և նոյն տեղից մեզ հաղորդում են, որ
արաղ քաղաքից յետոյ թիւան դիրքը շարաթիւն-
րով մնում է տների բակերի մէջ և չոքերից զար-
շանաւորութիւն է տարածում, որ շատ վնասակար
է բնակիչների առողջութեանը: Նամակագիրը
հրաւիրում է տեղական մէլիքի ուշադրութիւնը
այս անկարգութեան վրա և առաջարկում է
նրան ստիպել բնակիչներին մաքրել իրանց բա-
կերը, իսկ չը հնազանդվողներից առգանք առ-
նել:

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են, որ այն
տեղի բնակիչների մեծ մասը կը ուր անուան-
ված պանդոկում անդադար թուղթ են խաղում:
Յաւաքին այն է, որ թուղթ խաղացող պարոն-
ները բերում են իրանց հետ իրանց փոքր երե-
խաներին, չը մտածելով, որ դա վատ հետեանք-
ներ կարող է ունենալ երեխաների համար, որոնք
ամեն բան իսկոյն ըմբռնում են:

Յուլիսի 22-ին Թիֆլիսի Նաւթուղի հիւան-
դանոցի մէջ գտնվող հիւանդ գինեւորների հա-
մար հաւաքվեցան նուիրատուութիւնները ընդա-
մեն 1131 բուրջ և 56 կօպ. գումարի: Այդ գու-
մարից իրեղեններով հաւաքվեցաւ 944 բ. 6 կօպ.
գումարի, իսկ փողով 187 բ. 50 կ. գումարի:
Գրախոս եղել է 291 բ. 60 կ.: Աւելի ծախված
է 104 բ. 10 կ., որ պէտք է լրանայ նոր նուի-
րատուութիւններով: Նուիրատուութիւնների մէջ
մասնակցում էին գլխաւորապէս հայերը, մալա-
կանները և պարսիկները: Բայց նոյնպէս մաս-
նակցում էին, վրացիները գերմանացիները, հրէա-
ները: Հիւանդները ստացան խաչք, սուրբ պատ-
կերներ, սուրբ գրքեր, նոյնպէս զանազան իրե-
ղեններ, ինչպէս ծխախոտ, հաց, կտաւ, չորեր
և այլն: Այդ բոլոր նուիրատուութիւնները ունին
բոլորովին մասնաւոր բարեգործութեան բնաւո-
րութիւն և ոչ պաշտօնական: Այսպիսի բարի
գործով Թիֆլիսի հասարակութիւնը տօնեց կար-
մի խաչի ընկերութեան Հովանաւորութեամբ, Նո-
րին Կայսերական Մեծութեան Կայսրութեամբ ա-
նուանակոչութեան օրը:

Մեզ խորոմում են յայտնել որ Նաւթուղի գի-
նեւորական հիւանդանոցին օգնել ցանկացող-
ները կարող են նուիրել թէ ուսուցիչ և թէ ու-
րիշ տեղական լեզուներով գրքեր և լրագիրներ:
Հիւանդների ընդհանուր թիւից, այն է 681 հոգուց
միայն 235 հոգի զբաղեւ չեն: Կան հիւանդների
մէջ և թիւքը գերիներ: Հիւանդ գինեւորների
մէջ հայերը, թիւքերը և հրէաները բոլորն էլ
զբաղեւ են: Անդրադէտներ կան ուրիշ ազգու-
թիւններին պատկանող հիւանդների մէջ:

Մասնաւոր նամակներից տեղեկանում ենք որ
Ս. ՊԵՏՏՐՈՒՄԻՐԻ Բարձր քաղաքական չրջան-
ներում գիտաւարութիւն կայ առաջարկել մի
պրօէկտ Ռուսաստանում նոր տոմար (նոր
ստիլ) մտցնելու, ինչպէս որ մտքած է ամբողջ
արևմտեան Եւրոպայում և Ամերիկայում: Ասում
են որ պրօէկտը արդէն մշակվում է և գիտա-
ւարութիւն կայ ներկայացնել նրան Կիտուլիւն-
ների ձեռնարանին, գործին վերջնական վճիռ
տալու համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԼՕՐԳ ԳԵՐԵԻԻ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՆԸ

Լօրդ Բիկոնսթիլը Բերլինից վերադառնա-
լուց յետոյ՝ առաջին անգամ յուլիսի 18-ին
ներկայացաւ լօրդերի խորհրդարանում ուր
մեծ փառքով ընդունվեցաւ և մի երկար
ձուռ խօսեց իր քաղաքականութիւնը պաշտ-
պանելու համար: Նրանից յետոյ լօրդ Կեր-
բին շնորհաւորեց կարիւնէտին որ ինչ և իցէ
կերպով վերջացրեց գործերի անտոշ գրու-
թիւնը: Բերլինի դաշնագրից, ասաց, աւելի
շահաւոր է քան թէ Սան-Ստէֆանոյի դաշ-

նագրի, թէպէտ այդ դաշնագրութիւնն էլ
տեղական մի կարգ չը հաստատեց: Եւրոպա-
կան մասի կարգադրութիւնները համեմա-
տաբար լաւ են, այնպէս որ չարժէ երկար
խօսել նրանց վերաբերութեամբ: Մեծ գործը
Ասիայի համար եղած կարգադրութիւնների
մէջ է: Եւ ընդունում եմ որ մեծ տարբե-
րութիւն կայ այժմ ընդունված պլանի և
այն պլանի մէջ որ ընդունել էին երեք ամ-
սից առաջ: Նրբ մարտ ամսի վերջին օրե-
րում եւ թողեցի կարիւնէտը, գլխաւոր պատ-
ճառը այն էր որ ասում էին թէ պէտք է
մի նաւային կայարան ունենանք մեզ համար
Միջերկրական ծովի արեւելեան մասում և
թէ դրա համար հարկաւոր էր գրաւել Կիպ-
րոս կղզին և մի տեղ Միջերկրական ծովափում
Այդ պլանը իրադրութեամբ համար մոտճում
էին Հնդկաստանից արշաւել Միջերկրական
ծովի մինչև հասնութեամբ կամ թէ առանց
նրա հասնութեան, թէպէտ սուլթանին կա-
տարեալ վարձատրութիւն պիտի լինէր իր
ունեցած կորուստների համար: Եւ իմ խղ-
ճին հակառակ համարեցի, թէ իրաւաբա-
նական և թէ քաղաքական կէտից նկատե-
լով, խաղաղութեան ժամանակ զօրք ուղար-
կել մի բարեկամ տէրութեան երկիրը, առանց
նրա վեհապետի հաւանութեան: Անարաւ-
կոյս այդ շարժումի հետեանքը այն կը լինէր
որ ուսումնական բանտին էլ անշարժ չէր մնալ և
կը մտնէր Կ. Պօլս: Որովհետեւ այժմ Կիպ-
րոսի գրաւումը սուլթանի հաւանութեամբ
եղած է, էլ հարկ չի մնայ այն գլխաւոր
առարկութեան որ ես արի այն ժամանակ
կարիւնէտում: Բայց ինչ որ էլ լինի գործերի
արդի գրութիւնը, ես չեմ կարծում որ կա-
րողանանք չը պարտաւել կառավարութեան
վարմունքը: Նախ որ ես չեմ համոզված թէ
հարկաւորութիւն կար մի նոր նաւային կա-
յարան ունենալու: Մենք ունենք Մալտան որ
ծովով երկու օր հեռու է մեղանից և շատ
խելահաս մարդկերանց կարծիքն այն է որ
եթէ Կիպրոսի համար վաճառվելու փողի
կէսը ծախս անենք Մալտայի վրա, աւելի
գործնական հետեանքներ կունենայ: Եթէ
մենք պահենք նաւային երկու մեծ կայա-
րաններ Միջերկրականում, դրա համար կը
ստիպվենք շատ ծախսեր անել, կամ որ հո-
ւանական է, երկուսն էլ կը փչացնենք նաւ, և
ստարակոյս ունենալ Կիպրոսի մասին: Ասում
են որ նաւահանգիստ չը կայ Կիպրոսում,
թէպէտ մի նաւակայք կայ և մի տեսակ
տեղ որ կարելի է նաւահանգիստ վերածել:
Կիպրոսի կիմայի մասին կարծիքները տար-
բեր են, բայց երեւ թէ սոյոց է որ տարվայ
մի քանի ժամանակներում կլինան վատա-
ւօղջ և լինում: Նրբ հարցնում եմ թէ ինչի
աւելի լաւ են համարել Կիպրոսը քան թէ
մի այլ կղզի, ասում են թէ որովհետեւ այդ
կղզին գտնվում է եփրատի ձորի երկաթուղու
ճանապարհի վրա: Այդ երկաթուղու մասին
կարծիքները տարբեր են: Եւ առիթ ունեցա
ուսումնասիրել այդ գործը և այն եզրակա-
ցութեան հասալ որ անդիացի շահատէր-
ները երբեք չեն առաջարկած այդչափ յու-
սահասական և այդչափ քիչ շահաւոր մի
գործ որ անդիացի ակցիօներներին մեծ վնաս
տար: Չեմ կարծում որ կարելի լինի շինել
այդ երկաթուղու զիծը, եթէ անգլիա-
կան կառավարութիւնը կամ հնդկական կա-
րավարութիւնը և կամ երկուսն էլ միա-
սին չերաշխաւորեն այդ գործին: Եւ վախե-
նում եմ որ երաշխաւորող երկու կառավա-
րութիւններն էլ տարեկան մէկ միլիօն ստեր-
լինգ ոսկի զուր կորուստ կունենան: Եթէ
Կ. Պօլսի համար մոտճենք, նա այնչափ հե-
ռու է գտնվում որ այդ երկաթուղու հետ
շատ մեծ գործ չի ունենայ: Սուէզի ջրանցքի
գրութիւնը չի նմանվի սրան, նա տարակոյս
չը կայ թէ լուսադոյն է և թէ նրա պաշտ-
պանութիւնը մեզ համար ամենակարևոր

